

Աղայեան Արշալոյս  
Տէրտէրեան Բագրատ

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԻՐԱՆՈՒՄ  
1638-2011

2012

Արշալոյս Աղայեան  
Բագրատ Տէրտէրեան

**ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆ  
ԻՐԱՆՈՒՄ  
1638-2011**


Վերակազմող խմբագիրներ՝  
**ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ  
ԴՈԿՏ. ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ**

**ԹԵՀՐԱՆ  
2012**

Սոյն գիրքը հրատարակում է ազնիւ  
մեկենասութեամբ  
Եղիայեան ընտանիքի՝ ի յիշատակ իրենց  
հանգուցեալ հօր՝

## **ԻԻԱՆ ԵՂԻԱՅԵԱՆԻ**

**Բիւր ջնորհակալութիւն՝  
ազնիւ նւիրատու ընտանիքին եւ  
խաղաղութիւն ու յաւիտենական հանգիստ՝  
իրենց հանգուցեալ ննջեցեալին:**



ԻԼՆ ԵՂԻԱՅԵԱՆ



**ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹԵԱՆ 500- ԱՄԵԱԿ**

**1512 - 2012**



## Ասք սիրոյ, նւիրումի եւ գրքի պաշտամունքի

Երեւանի Պետական համալսարանում իմ սովորելու առաջին տարիներից, Թեհրանում, մայրս՝ Շուշան Զամանեան-Սիմոնեանը, ԵՊՀ Պատմութեան ֆակուլտետի ազգագրութեան ամբիոնի վարիչ Իւրա Մկրտումեանի եւ ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի բանահիւսութեան դասախօս Նելլի Յակոբեանի ղեկավարութեամբ, ազգագրական եւ բանահիւսական նիւթերի հաւաքագրմամբ ու ձայնագրմամբ էր զբաղւած: Ջանադիր աշխատանքի արդիւնքում՝ ստեղծւեց նիւթերի մեծ պաշար, որի հիմամբ էլ նա շարադրեց Բուրլարի գաւառին նւիրւած գիրք...

Այդ ձայնագրութիւնների մի մասը վերծանելուց յետոյ՝ օգտագործեցի որպէս Կենտրոնական Իրանի Բուրլարի, Գափլա, Քեամարա եւ Քեազազ գաւառների հայկական խօսւածքների ուսումնասիրման համար անհրաժեշտ փաստացի նիւթ: Նիւթերի մի փունջ էլ տեղադրւեց աւարտածառերում:

Ահա այստեղ ցանկանում ենք ընթերցողին մատուցել հայ մարդու մեծ հաւատի ու նւիրումի մասին պատմող մի վկայութիւն կամ աւելի ճիշտ՝ մի վկայբանութիւն, որը որպէս Բուրլարի գաւառի խօսւածքի նմուշ՝ 1989 թ.-ից գետեղւած է տողերիս հեղինակի «Բուրլարի գաւառի խօսւածքը» մագիստրոսական աւարտածառում...

Առաջին համաշխարհային պատերազմի տարիները շատ ծանր ու աղէտաբեր են եղել նաեւ իրանահայութեան համար: Կենտրոնական Իրանի եօթ հայկական գաւառներն այդ տարիներին լուրջ փորձութիւնների են ենթարկւել եւ անդառնալի կորուստներ կրել:

Այդ տարիներին Իրանը Ֆէոդալական մասնատւածութեան շրջան էր ապրում: Միջֆէոդալական բախումների գոհ էին դառնում հակադիր տներին պատկանող գիւղերի

բնակիչները: Հրահրուում էին կռիւներ ու կողոպուտներ, որոնց արդիւնքում ինչքից ու ունեցւածքից զրկուում էին ամբողջ գիւղեր ու բնակավայրեր: 1917-ի ձմեռը, յատկապէս, ճակատագրական եղաւ: Այդ ձմռանը նախորդող աշնան ամիսներին լոռ թալանչիներ ու կողոպտիչներ՝ Դոքանին, Շոքրօլլահը, Ռաջաբալին եւ ուրիշներ իրենց հրոսակախմբերով աւարի ու թալանի մատնեցին հայկական գաւառների գիւղերը: Փերիա գաւառից քիչ գիւղեր կողոպուտեցին: Մի մասը վանքապատկան լինելով՝ ապահով էր, որոշ գիւղեր գէնք ունէին: Օրինակ՝ Լ. Մինասեանի «Փերիայի պատմութիւն» գրքի հաւաստմամբ՝ Սանգիբարան գիւղի բնակիչները գէնքով դիմադրեցին աւագակախմբերի առջեւ: Գիւղի պաշտպանութեան դիրքերում քաջի մահով ընկան իրենց տունն ու գիւղը հսկող հինգ սանգիբարանցի երիտասարդներ, որոնց թւում նաեւ տողերիս հեղինակի հօր հօրեղբայր Թադէոս Մատուրեանը (հետագայում հայրիկիս նրա անունը տւեցին): Թալանւեցին Միլակերտը եւ մի քանի այլ գիւղեր:

Բուրլարի գաւառը աւելի մեծ մասշտաբներով կողոպուտի ու աւարառութեան ենթարկւեց, այնպէս որ՝ այդ աշնանը յաջորդած ձմռան ամիսներին աւելի քան 900 բուրլարցիներ սովի ու զրկանքի ահաւոր պայմաններում մահացան:

Բացւող գարունը գարմանալիօրէն ջրառատ է եղել ու պայծառ: Քաղցի ու զրկանքի պայմաններում մահամերձ մարդկանց խմբերը գարնան առաջին իսկ օրերից դաշտերն էին դուրս եկել ծլարձակող բուսականութեամբ սնելու կարօտով...

Այդ օրերին, իրենց ընտանիքների վերջին գումարները վերցրած, երեւինաեւ պարտքով վերցրած փողերով, երեք հայ երիտասարդ Ալիգուդարզ շրջկենտրոն են մեկնում՝ լծկան անասուն (եզ) գնելու նպատակով: Մի գիշեր նրանք հիւրընկալւում են ալիգուդարզցի լուռի տանը: Գիշերւայ ժամին հիւրընկալող լուռ տղաներին պատմում է, թէ անցեալ աշնանը Փերիա գաւառի Միլակերտ գիւղը կողոպտող աւագակներին, ինչպէս է սարսափեցրել գողօնի մէջ եղած մի տոպրակը: Նրանք մթութեան մէջ նկատել են, որ տոպրակի

վրայ լոյս է կամար տւել եւ վախեցած ու սահմուկած տոպրակը իրեն են թողել: Ապա ինքն էլ իր հերթին տոպրակը բերում ու տղաներին ցոյց է տալիս: Ձննումից պարզւում է, որ տոպրակում «Սրբոց Աւետարան» կայ (այդպէս է կոչւել մագաղաթեայ ձեռագիրը): Տղաները ի մի են բերում իրենց մօտ եղած գումարները, կարապետենց թումասը եւ Քոչարի թումասը իւրաքանչիւրը 15 թուման է տալիս եւ Օհանի իսաչատուրը 30 թուման եւ 60 թուման փրկագնով Միլակերտ գիւղի «Ս. Ջօրաւոր» Աւետարանը Գովզ է գնում:

Գովզում մինչ այդ կար «Թուխ մանուկը»: Գիրքը դրել էին առանձին սենեակում «բուխարու» վրայ, նրա ուխտաւորներին թէյով հիւրասիրում էին ու գիշերելու տեղ տալիս: Իսկ գրքի ոտքը եկողների թիւը փոքր չէր: «Ջօրաւոր Աւետարանին» էլ նոյն ձեւով են վերաբերում: Լուրը հասնում է Միլակերտ: Աւետարանի տէրերը գալիս են Բուրլարի գաւառի Գովզ գիւղ, իրավիճակին մօտիկից ծանօթանում եւ ապա վերադառնում են՝ ասելով.

- Եթէ գիրքը կամեցել է այստեղ գալ, թող Ձեզ մօտ էլ մնայ:

Եւ գիրքը մնում է Գովզում: Ուխտաւորները գալիս են արդէն նաեւ Փերիայից, Չհարմահալից, Գափլայից, Քեամարայից եւ Քեագազից: «Ջօրաւորը» դառնում է բուրլարցիների սիրւած գրքերից մէկը եւ ամենաշատ ուխտաւորներ ունեցողներից: Իսկ «Ջօրաւորը» իր զօրութեամբ շատերին էր գոհունակութիւն պարգեւել...

1946 թւականին սկիզբ առաւ ներգաղթը: Ամբողջ Գափլան ներգրաււեց, Չհարմահալի, Փերիայի, Բուրլարիի որոշ գիւղեր էլ մաս կազմեցին ներգաղթողների քարաւանների մէջ: Ներգաղթը շուտով կանգ առաւ եւ ամբողջ Բուրլարին շարժւեց դէպի Թեհրան քաղաք, որ ասուում էր՝ դեռ ներգաղթի ցուցակներից դուրս չի դրւել:

Մինչեւ 60 թթ. ներգաղթ չեղաւ եւ մարդիկ Թեհրանում նոր կեանք ստեղծեցին: Յետոյ բացւեց Արաքսի միւս ափը տանող ճամբան: Մի քանի տասնամեակների ընթացքում մեծ թւով մարդիկ ներգաղթեցին Հայաստան...

Վկայութիւնը ձայնագրուել է 1986 թ.-ին՝ Թեհրանում:  
Վկայողը 1888 թ.-ին ծնւած 98-ամեայ Հայրապետ Մատուրի  
Զամանեանն է, որը մահացել է մէկ տարի անց՝ 1987 թ.-ին:

Երբ բանահաւաք Շուշան Զամանեանը (ազգանւան  
նմանութիւնը պատահական է) հարց է տալիս, թէ. «Վաթնուն  
թումանը ինչ փող էր, ինչ արժէք ունէր»: Մերունի բանասացը  
պատասխանում է. «Խալարը չորս թուման, հինգ թուման,  
հիւրէք թուման էր (խօսքը ցորենի երեք հարիւր կիլոգրամի  
արժէքի մասին է): Լաւ եզը տասը թուման էր»:

Մերունին նաեւ ասել է.

- Կարապետի Թումասը Տէր Հարոնի տիրացուի հէրն էր:  
Ապա աւելացրել, որ նա վճարել է միւս ընկերների տւած  
գումարները, իսկ վերջում. «Իրա տղէն էլ տարաւ: Տ'արաւ  
Հայաստան...»:

Եւ այսպէս՝ «Մշոյ ճառընտիրի» կողքին, հայոց մտանա-  
նների մեծ հանգրւանում հանգիստ է առել «Զօրաւոր Սրբոց  
Աւետարանը»:

Մաշտոցից մինչեւ Մատենադարան, հայ գիրքը այսպէս է  
փառաւորուել ու պանծացել հայ մարդու գիտակցութեան  
գազաթնակէտում:

Կեցցես ժողովուրդ:

Գիրք ապրեցնելով ապրած ժողովուրդ,

Գրքի զօրութեամբ ապրող ժողովուրդ:

ԳՈԿՏ. ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ

## Երկու խօսք

Ձեր ձեռքում գտնուող աշխատութիւնը, իրանահայ գրքի տարեգրութիւնն է ներկայացնում: Նրա նիւթերը կուտակել են երբեմնի իրանահայ, արդէն աւելի քան 40 տարւայ հայրենաբնակ եւ հայաստանցի գեղանկարիչ՝ Արշալոյս Աղայեանի ու նրան աջակցել կամեցողների ջանքերով: Կուտակւած նիւթերը գտել ու դասդասել են նրա եւ կրկին երբեմնի իրանահայ եւ 1946 թ.-ից հայրենաբնակ, Արարատի շրջանի Աւշար գիւղի քահանայորդի գիւղատնտեսագէտ՝ Բագրատ Տէրտէրեանի միջոցով: Յետոյ կատարել են շարւածքի, խմբագրման, էջադրման ու ամբողջացման աշխատանքները: Գիրքը այդ վիճակում հասել է Թեհրան, Ա. Աղայեանի Թեհրանում ունեցած անհատական ցուցահանդէսի օրերին յանձնւել է Թեհրանի հայոց թեմի թեմակալ առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանին: Սրբազան Հայրն էլ նիւթը տրամադրել է մեզ՝ ամբողջութեամբ դիտելու եւ անհրաժեշտ փոփոխութիւններից ու յաւելումներից յետոյ՝ տպագրութեան յանձնելու նպատակով:

Անհրաժեշտ բոլոր փոփոխութիւնները որոշել եւ կատարել ենք Սրբազան Հօր հետ համախորհուրդ:

Նախ Սրբազան Հօր միջոցով նամակներ են յղւել իրանահայ միութիւններին, մշակութային, ազգային եւ հրատարակչական կենտրոններին, անհատ անձանց, որից յետոյ նամակների հասցէատէրերի կողմից առաջնորդարան են ուղարկւել մեծ քանակութեամբ հրատարակւած գրքերի ցուցակներ եւ տւեալներ՝ մինչեւ 2011 թ. ներառեալ:

Նիւթերը ուսումնասիրելուց յետոյ՝ գրքի նախնական ցուցակից դուրս ենք դրել՝ «Օտարալեզու հրատարակութիւնները» եւ «Իրանահայութեան մասին գրքերը» գլուխները, դրանց փոխարէն «Գեղարւեստական գրականութեան» ցուցակից, հնարաւորի սահմաններում, առանձնացրել ենք «Մանկական գրականութեան», իսկ «Պատմութիւն, տարելիցներ» բաժնից «Յօբելենական հրատարակութիւնները»,

որոնք որպէս առանձին գլուխներ են ներկայացուել: «Օրացոյցներ» բաժնի 209 յօդաւածները հիմնական փոփոխութեան են ենթարկուել: Դուրս են դրուել դրանց աւելորդ ընկալուող բաժինը եւ կրկնութիւնները: Աւելացուել են շուրջ 10 անուն օրացոյցների տւելաները: Առաջնորդարանի հասցէով ստացուած ցուցակներն ամբողջութեամբ համեմատուել են գրքի ցուցակների հետ եւ բացակայող անուններն ընդգրկուել են:

Եւ ահա վերակազմուած ու որոշ չափով խմբագրուած գիրքն ամբողջութեամբ մատուցուում է ընթերցողին: Բայց անհրաժեշտ ենք գգում մի քանի դիտողութիւններ եւ յիշեցումներ կատարել:

Թէկուզ նիւթը վերակազմուել է, բայց, իհարկէ, հնարաւոր չէր բոլոր կէտերը փոփոխութեան ենթարկել: Առանձին գլուխներ կարող էին այլ կերպ կազմուել. օրինակ՝ «Իմացաբանութեան» մէջ տեղադրուել է «Խաչբառ» կամ «Հետաքրքրաշարժ հայոց լեզու», «Բժշկութեան» մէջ «Ձեռքի եղունգների մասին» ժամանցային նիւթ: «Դասագրքերի» բաժնում կարող էին ամփոփ ներկայացուել հարկի, կամ անհարկի կրկնութիւնները եւ այլն:

Բոլոր նրանց, ովքեր քննախոյզ հայեացքով են նայելու, պէտք է յիշեցնենք, որ սա առաջին անգամ է իրանահայոց պատմութեան մէջ, երբ նւիրեալ անձինք ձեռնամուխ են լինում համայնքի հրատարակութիւնների ամբողջական ցուցակ կազմելու գործին: Սա յոյժ կարեւոր գործ է, ծանր ու տեւական աշխատանքի արդիւնք, դրւատանքի ու մեծարման արժանի: Իսկապէս, այսպիսի աշխատանքին լծւելն ի սկզբանէ քաջութիւն ու նւիրում է պահանջել: Եւ փառք Աստծոյ, որ այսօր գրքի հրատարակմամբ՝ կազմողների եւ բոլոր աջակից մարդկանց ջանքերի գեղեցիկ ու վայելուչ արդիւնքը բոլորիս համար ընկալելի է դառնում:

Գրքինախնական՝ Հայաստանում կազմուած էլեկտրոնային տարբերակի աշխատանքները՝ խմբագրումը, դասակարգումը, համադրումը, էջադրումը եւ ձեւաւորումը կատարել է պրն. Գառնիկ Յովասափեանը, իսկ շարուածքի աշխատանքներին մասնակցել են՝ օր. Գոհար Մարտոյեանը եւ օր. Գայիանէ Համբարձումեանը:

Թեհրանում գրքի խմբագրման վերջնական լրացումների եւ փոփոխութիւնների շարւածքը, սրբագրութեան վերջնական աշխատանքը, շարւածքի փոփոխութիւնների ստուգումը եւ գրքի էջադրման ու գեղարւեստականօրէն ձեւաւորման աշխատանքները կատարել են «Ալիք» հաստատութիւնում:

Իրանահայ գրքի իւրայատուկ այս մատենագիտական աշխատանքի հրատարակման համար էլ հարկ ենք զգում կազմողների երախտագիտութիւնը յայտնել Թեհրանի հայոց թեմակալ առաջնորդ՝ գրագէտ ու գրասէր եւ գրահրատարակիչ Տ. Սեպուհ արք. Սարգսեանին, որի առանձին, համապարփակ, ընդգրկուն եւ բազմաբովանդակ «Հայ գիրքը՝ աղբիւր ինքնաճանաչման» նախաբանը զարդարում է գրքի մուտքը:

Վերջում բոլոր նրանց, ովքեր գրքի կապակցութեամբ ասելիք կունենան, կամ բացակայող գրքերի մասին տւեալներ հաղորդելու տրամադրութիւն, խնդրում ենք՝ կապուեն Թեհրանի հայոց թեմի առաջնորդարանի հասցէով Տ. Սեպուհ արք. Սարգսեանի հետ: Կուտակւած նիւթերը այլ առիթներով լոյս կընծայեն՝ որպէս ներկայ գրքի յաւելւած:

ԴՈԿՏ. Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

## Հայ գիրքը՝ աղբիւր ինքնաճանաչման

«Մի անցուցես ի վերայ քո օր՝  
որ եթէ չկարդասցես գիրք»  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑԻ, ԺԳ դար

Քրիստոնէական ժայռարմատ հաւատքով ու մեր ժողովրդի տառապանքի, նեղութեան ու չարչարալից կեանքի երկունքով նւիրականացած ու երկնւած հայ գիրքը կազմում է մեր ժողովրդի գոյութեան գլխաւորագոյն կուսաններից մէկը: Հայ գիրքը մեր ժողովրդի տառապալից կեանքի վկայարանն է. հոգեկան աշխարհը հայ մարդու. հայ գիրքը... աստուածաբոյր ճշմարտութիւնների շտեմարան, հայի հանճարեղ մտքի ստեղծագործութեան արդիւնք. գիտութեան ու լոյսի փարոս. տիեզերքի Արարչի փառաբանանքի կոթող. հայ մտքի եւ հոգու փիլիսոփայական ճախրանքների վերնատուն. հայկազեան որդուց հաղորդութեան սկիի. ոսկեղարի մեր ոսկեղնիկ լեզուի ու լուսասփիւռ հաւատքի գանձարան. հայոց քաջաց-քաջերի կեանքի դրատիք. հայկեան ցեղի զաւակաց յաւերժութեան գրաւական. հայ ինքնուրոյնութեան արթուն պահակ. Թորգոմեան ազգի զաւակների կենսապարգելի հաց ու ... կարելի է դեռեւս շարունակել մեր մտածումների թելը՝ հասնելու համար ներկային, այսօրւան, երբ մենք իբրեւ աշակերտներ, Սահակ-Մեսրոպեան անմահանունը գոյգի սիրով վառւած ու քրիստոնէական հաւատքով զօրացած՝ ուզում ենք մի պահ հաղորդակից դառնալ մեր հայրերի տառապալից կեանքին եւ հաղորդել նրանց իրագործած կոթողական գործերով: Այդ գործերից մէկը ահա հայ գրքի տպագրութիւնն է, որի 500-ամեակն է այս տարի եւ մենք՝ Աւետարանի ու Մ. Մեսրոպի աշակերտները՝ յարգանքի եւ երախտագիտութեան ամենախոր ու անկեղծագոյն զգացումներով պարուրած մեր հոգին՝ ցանկանում ենք անդրադառնալ այդ մեծ գործին, վեճ աշխատանքին եւ նաեւ, այս առթիւ, վեր հանել մտատիպարը հայ տպագրութեան Գուտենբերգի՝

համեստօրէն ինքն իրեն Մեղապարտ անւանած Յակոբի՝  
Մեղապարտ մականւանեալի:

Հայ գիրք, տպագրութիւն, 500-ամեակ...: Բառեր, թւա-  
նըչաններ, որոնք իրենց նիւթական, թանձրացեալ իմաստից  
այն կողմ, այլ աշխարհներ են տեղափոխուած մեզ ու գաղափար-  
ների, մտալոգոստմների անանցանելի շղարշով պատուած են  
հայ մարդու ողջ էութիւնը՝ նրան կամրջելով իր հայրերի  
յաւերժաբոյր անցեալին:

Հայ գրքի տպագրութեան 500-ամեակի եւ ԻԻՆԵՍԿՕ-ի  
կողմից Երեւանը գրքի միջազգային մայրաքաղաք հռչակե-  
լու առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսը հայրապետա-  
կան յատուկ գրով 2012 տարին յայտարարեց Հայ գրքի տարի  
եւ թելադրեց Կիլիկեան Աթոռի թեմակալ առաջնորդներին  
եւ ազգային իշխանութիւններին յատուկ հանդիսութիւններ  
ընել այս ամեակը՝ մէկ անգամ եւս շեշտելով հայ գրքի  
անժխտելի դերը՝ հայ մարդու քրիստոնէական եւ ազգային  
նկարագրի կազմաւորման ու պահպանման մէջ:

Այսօր, դժբախտաբար, հայ գրքի տպագրութիւնն ու  
ընթերցումը նահանջի մէջ են: Հայկական գրադարանների  
հազարավոր ալիքները լինում են ուսանողներ, որոնք իրենց  
յանձնարարած նիւթի ուսումնասիրութեան համար այնտեղ  
են: Մեր տներում գրադարանները փոխարինւում են  
համակարգիչներով եւ այլ գործիքներով:

Ազգովի կարիքն ունենք արթնութեան, զգօնութեամբ  
գործելու եւ վերանայման ենթարկելու մեր վերաբերմունքը՝  
հայ գրքի նկատմամբ, յատկապէս, երբ հայ գրքի տպագրու-  
թեան խորհրդով ցանկանում ենք օծուն տեսնել այս եւ  
առաջիկայ տարիները:

Ամեակների նշումը, սովորաբար, երկու գլխաւոր բան է  
պահանջում. նախ կատարած աշխատանքի եւ նրա տարողու-  
թեան ամբողջական գիտակցութիւնը. երկրորդ՝ ամեակը  
նշողների ազնական ու զնահատանքի արժանի վերաբեր-  
մունքը՝ նշող տարեթւում՝ ամեակի նկատմամբ: Դեռեւս  
ամեակը, ինձ համար, է՛լ հաղորդութեան է՛լ հաշւետւութեան  
պահ է աւելի քան, լոկ դասախօսութեամբ կամ դասախօսու-  
թիւններով, ձեռնարկներով նշելի, յիշատակելի հանդիսու-

Թիւն, ոգեկոչում: Այս պահը, մեզանից իւրաքանչիւրի համար, կատարւած աշխատանքի ու այդ աշխատանքի մշակների հետ հոգեպէս հաղորդելու, կամրջւելու պահ է, որով միայն հնարաւոր կը լինի ունենալ եւ զօրութեան եւ մեծութեան զգացում, փոխանցւած մեզ յոբելեարից եւ երկրորդ հաշւետւութեան ժամ, երբ հայ մարդը, ուսուցիչը, հայ աշակերտը, հայ եկեղեցականը կանգնած դէմ-յանդիման իր անցեալի ժառանգութեան՝ քննում է ինքն իրեն՝ տեսնելու համար իր հաւատարմութեան ջերմաչափը՝ հանդէպ իր երախտարժան հայրերի աւանդ թողած կտակի:

Հայ գիրքը դարերի ընթացքում եղել է հայ մարդու անբաժանելի ընկերը. այն օրից, երբ Մեսրոպի հանճարով հայ գրերը հնարեցին ու սկիզբը դրեց հայ դպրութեան, հայ գիրքը եղաւ հայ մարդու բալասանը: ԺԳ դարի Գեղարդայ վանքի վանահայրերից Յովհաննէս Գառնեցին իր միաբաններից մէկին փոխանցած զանազան թելադրութիւնների կողքին՝ տալիս է նաեւ հետեւեալ ուշագրաւ խրատը.

«Մի անցուցես ի վերայ քո օր՝  
Որ եթէ չկարդասցես գիրք»

Բայց, նախ մի քանի խօսք՝ գիրք կոչւած իրականութեան մասին: Գիրք ասելով՝ սովորաբար հասկանում ենք տպւած գիրքը, սակայն յայտնի է, որ գրքեր գոյութիւն են ունեցել ու այդպէս են կոչւել՝ նոյնիսկ տպագրութեան գիւտից առաջ. ձեռագիր գրքեր գոյութիւն են ունեցել, թէեւ դրանք տպագրւած գրքերի նման դիւրամատչելի չեն եղել, այսուհանդերձ՝ լայն տարածում են ունեցել, ինչպէս զանազան ազգերում, նոյնպէս էլ՝ հայերի մօտ: Իսկ գիրք բառը հայերէնում գիր բառի յոգնակի ձեւն է. հոմանիշ ունենալով մատեան բառը, որից եկել են մատենադարան, մատենագիր, մատենագրութիւն եւ այլ բառեր:

Ե դարից սկսած, հայաշխարհը ողողւում է գրքերով, որոնք սկզբնական շրջանում թարգմանական գործեր են եղել.

հետագայում, սակայն, ինքնուրույն գրքեր են գրւում, բազմացւում ու լայն տարածում գտնում. այնուհետեւ Հայաստանի վանքերը դառնում են ձեռագիր հայ գրքերի կենտրոնը: Այս ձեռագիր գրքերը գրւել, ընդօրինակւել են անձնէջր, պարզ ու համեստ մարդկանց գրիչների կողմից՝ ամենադառն պայմաններում: Գրիչը այն մարդն էր, որ ձեռագիրն էր ընդօրինակում. գրիչները ձեռագիրներն ընդօրինակելու իրենց աշխատանքի կողքին՝ ընդօրինակած ձեռագրերում թողել են յիշատակարաններ, որոնք պատմական անգնահատելի տեղեկութիւններ են ձեռագրի ընդօրինակման պարագաների, գրութեան վայրի, պատւիրողի, քաղաքական ժամանակակից իրադարձութիւնների եւ այլ բազմաթիւ հարցերի մասին:

Հայաստանում կային գրչութեան յատուկ դպրոցներ, որտեղ բազմաթիւ մարդիկ յատուկ կերպով սովորում էին գրչութեան արւեստը: Հայ գրիչները իրենք իրենց միշտ պարզ ու համեստ ձեւով են ներկայացրել, երբեմն նոյնսիկ ծայրայեղ համեստութեամբ այսպէս իրենք իրենց կոչել են եղկելի թերավարժ, անարւեստ, ազագուն, ծոյլ, սխալագիր, տրուպ եւլն.: Եղել են նաեւ պատանի գրիչներ, այլ նաեւ՝ գրչուհիներ. Երեւանի Մաշտոցի անւան մատենադարանի ձեռագրերի յիշատակարաններում հանդիպում ենք տասնեակ գրչուհիների անունների. այսպէս՝ Հեղինէ, Շուշանիկ, Եղիսաբեթ, Մարիամ, Մարգարիտ, Բրաբրոն, Պայծառ եւլն.:

Այս գրիչների շնորհիւ է, որ հայ ձեռագիր գիրքը, հակառակ իր դառը պատմութեան, գոյատեւեց ու հասաւ մեզ: Նրանք խորապէս հաւատացած էին հայ ձեռագիր գրքի ոգեղէն արժէքին. արդէն մագաղաթեայ ձեռագրերում յաճախ հանդիպում ենք սրտառուչ գրութիւնների, այսպէս՝

«Ձեռքս երթայ դառնայ ի հող  
Գիրքս մնայ յիշատակով»

Աստուածատուր անունով մի գրիչ նոյն այս գաղափարը աւելի լայն կերպով է արտայայտում.

Ո՛ր գիր որ մնաս,  
Ո՛ր ձեռ որ հողանաս,  
Ո՛ր եղբայր որ կարդաս,  
Ո՛ր ի քե գործես շնորհանաս.  
Աղաչեմ, աղաչեմ,  
Հանդիպողացդ պաղատեմ,  
Մեղաք մածեալ եւ սեւերես եմ  
Գծողիս Աստուած ողորմի խնդրեմ:

*Նոյն այս գրիչները իրենց ընդօրինակած ձեռագրերում  
խնդրում էին ձեռագրերը չծախել կամ գրաւի չղնել, ուշադիր  
լինել դրանց պահպանման նկատմամբ եւ պատերազմի  
ժամանակ մոռացութեան չտուեն: Մտեփանոս անունով գրիչը  
հետեւեալ խրատ-յանձնարարականն է գրում իր ընդօրինա-  
կած ձեռագրում:*

Բան մի խրատ տամ, լսեցէք,  
Գիրքս ամանաթ ձեզ պահեցէք,  
Գերի երթայ՝ նա դարձուցէք,  
Գէջ եւ ի կաթիլ տեղ մի դրէք,  
Զմոմս ի վերա մի թափուցէք,  
Թքոտ մատով մի շրջէք,  
Եւ լրբութեամբ մի պատառէք,  
Թէ պատուած խիբ լինիցէք,  
Բանիս աւարտ կայ, գիտացէք,  
Մեր կուսէն շատ չձանձրացնէք,  
Երկու շօրով եւ շագուսով պակաս չանէք:

*Իսկ ձեռագիր գողացողների հասցէին էլ յատուկ անէծքներ  
են գրել գրիչները. այսպէս՝*

Ով որ զսա գողնայ,  
Երկու աչօք կուրանայ,  
հոգով եւ մարմնով կապեալ մնայ  
Այժմ եւ յաւէտ եւ ապագայ:

Այս գրիչները երբեմն ծաղկողներ կամ մանրանկարիչներ էին միաժամանակ. եւ, սակայն, կային նաեւ յատուկ մանրանկարիչներ կամ ծաղկողներ, այսպէս՝ երբ գրիչը աւարտում էր իր ձեռագրի ընդօրինակութիւնը, գրւած էջերը յանձնւում էին մանրանկարչին, որ մագաղաթների էջերում դատարկ թողած տեղերում եւ լուսանցքներում նկարէր ձեռագրի բովանդակութեան համապատասխանող պատկերներ եւ կամ տարբեր բնոյթի այլ նկարներ, խորաններ, զարդեր:

Հայկական մանրանկարչութիւնը այսօր հիացումի ու սքանչացումի առարկայ է իր ներշնչման ուժով, նիւթերի բազմազանութեամբ, արւեստի նրբութիւններով, ինչպէս նաեւ գոյների ընտրութեան մեծ ճաշակով ու գծանկարի վարպետութեամբ: Հայ մանրանկարիչներից համաշխարհային ճանաչում ունի Թորոս Ռոսլինը (Կիլիկիա, ԺԳ դար), նշանաւոր արւեստագէտ-վարպետ մանրանկարիչներն են եղել՝ Մարգարէն (ԺԳ դար), Մոմիկը (ԺԳ-ԺԴ դար), Սարգիս Պիծակը (ԺԴ դար), Յակոբ Զուղայեցին (ԺԶ-ԺԷ դար) եւ շատ ուրիշներ:

Այսպէս գրւած եւ ծաղկւած մագաղաթեայ թերթերը տրւում էին կազմարարին, որը, իր հերթին, դասաւորում էր, կարում ու կազմում: Իսկ ձեռագիր ընդօրինակելու տեւողութիւնը, անշուշտ, կախում էր ունենում տրւած ձեռագրի ծաւալից. ընդհանրապէս հեշտ էր, որ գրիչները օրական 5-10 էջեր կարողանային ընդօրինակել:

Շնորհիւ այսպիսի նախանձախնդիր ու հաւատաւոր գրիչներին՝ հայ գիրքն ընդօրինակւած, բազմացւած ու դժւար պայմաններով շարունակել է գոյատեւել դարերի ընթացքում: Հայաստան աշխարհի վանքերն ու կրթական հաստատութիւնները եղել են հայ ձեռագիր գրքերի օջախը: Այդ վանքերից են եղել՝ Էջմիածնի, Նարեկի, Աղթամարի, Սաղմոսավանքի, Գեղարդի, Անիի, Գլաձորի, Տաթեւի, Հաղբատի, Սանահինի, Արգինայի, Կեչառիսի, Գետիկի, Հաղարծինի, Ամրտոլու վանքերը. իսկ Կիլիկեան շրջանում նշանաւոր են եղել՝ Հռոմկլայի, Սկեւուայի, Դրազարկի, Բարձրաբերդի եւ Ակնների վանքերը: Այս վանքերը ունեցել են

նաեւ իրենց գրադարանները, որտեղ երբեմն հազարաւոր ձեռագիր գրքեր էին պահպանուում: Ունեցել ենք նաեւ իշխաններ, որոնք առանձին գրադարաններ են ունեցել, ինչպէս՝ Գրիգոր Մագիստրոս Իշխանը, որը եղել է նաեւ Սանահինի համալսարանի դասախօսներից մէկը:

Դժբախտաբար, սակայն, հայ ձեռագիր գրքերը եւս ենթարկուել են յափշտակութեան եւ ոչնչացման, այլեւ գերեզմարութեան: Հայի համար իր ձեռագրերը սրբութիւններ էին. յաճախ նրանց փրկութեան համար հայ մարդը իր ընտանիքը զոհելու գնով ցանկացել է փրկել իր ձեռագիր գրքերը: Հետաքրքրական եւ սրտայոյզ դրւագներ են հասել մեզ այս մասին, որտեղ պատմուում է, թէ ինչպէս հայ մարդը ջանք է թափել իր ձեռագրերի անաղարտ պահպանման համար: Երեւանի Մաշտոցի անւան մատենադարանում է գտնուում Մշոյ ճառընտիրը, որի մագաղաթները 700 հորթի կաշից էին պատրասուել: Այս ձեռագիրը ԺԳ դարում սելջուկների կողմից խլել է, սակայն մեծ փրկագնով ազատուում է, իսկ 1915 թւականին, հայերի ջարդերի ընթացքում, Մուշ քաղաքի հայ տիկիւնների շնորհիւ՝ ազատուում եւ հասնում է Էջմիածին: Հակառակ պատերազմների, գաղթերին եւ ոչնչացումներին՝ այսօր շուրջ 25,000 հայկական ձեռագրեր գոյութիւն ունեն. կարելոր մասը՝ աւելի քան 10 հազարը՝ Երեւանում, իսկ մնացածը՝ Երուսաղէմ, Վենետիկ, Վիեննա, Լոնդոն, Փարիզ, Անթիլիաս եւ այլուր:

Այսպէս՝ հայ ձեռագիր գիրքը, անցնելով «Ընդ հուր եւ ընդ սուր» հասնում է մեզ՝ կազմելով մեր ժողովրդի հոգեւոր ժառանգութեան անգին հարստութիւնը:

Ձեռագիր հայ գիրքը շարունակուել է մինչեւ ԺԸ դար՝ հետզհետէ տեղի տալով տպագիր հայ գրքին:

Տպագրութեան գիւտը մարդկային կեանքի խոշորագոյն երեւոյթներից մէկն է եղել, եթէ ոչ՝ խոշորագոյնը: Նա մի նոր դարաշրջան էր բացում մարդկութեան առջեւ: Գերմանացի Եօհան Գուտենբերգի գիւտով՝ մարդկային քաղաքակրթութիւնը զարգացման, բարգաւաճման նոր հանգրւան

էր թեւակոխել. 1450-ական թւականներին կատարւած տպագրութեան գիւտը շուտով պէտք է տարածւէր ընդհանուր Եւրոպայի զանազան քաղաքներում, որոնցից մասնաւորաբար Վենետիկ քաղաքը պէտք է գրաւէր մասնաւոր տեղ. ահա այդ գիւտից հագիւ 57 տարի անցած, Վենետիկում, 1512 թւականին լոյս պէտք է ընծայւէր առաջին տպագիր հայ գիրքը՝ շնորհիւ Յակոբ Մեղապարտ անունով մի անհատի:

Այո՛, առաջին հայ տպագիր գիրքը տպւում էր հեռու Հայաստան աշխարհից, հեռաւոր Վենետիկ քաղաքում, որովհետեւ հայ ժողովրդի պատմութիւնը մեզ ցոյց է տալիս, որ ԺԴ-ԺԶ դարերում Հայաստանը իր ժողովրդով ապրում էր քաղաքական ամենաանապահով ու տագնապալի շրջաններից մէկը: Մոնղոլական իրարայաջորդ արշաւանքները Հայաստանը աւերակոյտի վերածեցին՝ պատճառ դառնալով հայ բնակչութեան նոր արտագաղթի. ապա Լենկթեմուրեան արշաւանքների ու նրանց յաջորդող իշխանութիւնների անկայուն ու հակամարտ մրցակցութիւնները՝ Հայաստանը իրենց իշխանութեան տակ պահելու, առաւել չափով վատթարացրեցին մեր ժողովրդի կացութիւնը: ԺԳ դարի վերջում եւ ԺԴ դարի սկզբում Փոքր Ասիայում առաջ էր գալիս մի նոր ուժ՝ Օսմանեան կայսրութիւնը, իսկ մօտաւորապէս միեւնոյն շրջանում, ԺԵ դարում, Պարսկաստանում հիմնւում էր Սեֆեւեան կամ Սեֆեան հարստութիւնը, ու այնուհետեւ Հայաստանը կուսխնձոր էր դառնում Օսմանեան եւ Սեֆեան պետութիւնների միջեւ. ԺԶ դարի սկզբներում երկու հակառակորդ պետութիւնները երկարատեւ պատերազմներ են մղում իրար դէմ: Այդ պատերազմների գլխաւոր թատերաբեմը Հայաստանն էր: 1509 թւականին Հայաստանի Մոկաց աշխարհում գրւած ձեռագիր յիշատակարանը հետեւեալ բառերով է նկարագրում այդ ժամանակաշրջանը. «Այս դառը եւ նեղ ժամանակներում մեծ պատուհաս եղաւ մեր աշխարհի վրայ: Քանի որ այդ ժամանակ դէպի Թարիզ գնաց Շահ Իսմայիլ անունով փաղիշահը, նեռի մի նախակարապետ եւ շատ ատերածութիւն արեց մեր աշխարհում՝ սպանութիւններ եւ կողո-

պուտ՝ բոլոր վայրերում: Եւ ո՞վ կարող է գրի առնել այն չարութիւնները կամ դատերը, որ մա գործում է աշխարհի վրայ: Եւ տեղից տեղ, աշխարհից աշխարհ շրջեցինք. շատերը սովամահ ու ճնախետդ եղան կամ գազանի բաժին դարձան նրա ահից»: Ամբողջ ԺԶ եւ ԺԷ դարերը իրարայաջորդ արշաւանքներով, աւերածութիւններով ու առաւել բռնագաղթերով էին յիշատակուում:

Շատ բնական էր, որ այս քաղաքական վիճակը պէտք է ազդէր նաեւ մշակութային կեանքի վրայ, եւ, սակայն, լոյսի ծարաւ, գիտութեան սիրով վառած հայր, հակառակ այս դառն իրողութեան, պէտք է լինէր առաջինը Մերձաւոր Արեւելքի ժողովուրդների, որ Գոլտենբերգեան տպագրական գիւտից ճառագայթող լոյսով պէտք է լուսաւորւէր՝ ծնունդ տալով հայ տպագիր առաջին գրքին, Վենետիկում, 1512 թւականին:

Վենետիկը իտալիայի այն քաղաքներից է եղել, որտեղ ըստ հայ եւ օտար պատմաբանների՝ ԺԱ դարից սկսած՝ հայկական համայնք է ունեցել. սակայն մինչեւ ԺԳ դար՝ այս համայնքը փոքրաթիւ է եղել. Կիլիկեան հայ թագաւորութեան եւ Վենետիկի Հանրապետութեան միջեւ կնքւած տնտեսական-առեւտրական եւ մշակութային դաշնագրերի բերումով՝ Վենետիկի հայ համայնքը հետզհետէ աճում է: ԺԲ դարից սկսած հայերը Վենետիկում ունեցել են «Հայոց տուն». իսկ յաջորդ դարերում հանդիպում ենք աւելի մեծ ու ընդարձակ «Հայոց տուն»-երի, որոնք ծառայում էին որպէս հաւաքատեղի: ԺԴ դարում իտալացի Մարկոս Միանին, որ եղել էր Կիլիկիայում եւ վայելել հայոց հիւրասիրութիւնը, իր տունը կտակում է հայերին: Հայոց տան փողոցը կոչւել է «Հայկական փողոց» եւ նրա մօտիկ կամուրջն էլ «Հայկական կամուրջ»: Վենետիկի հայ նշանաւոր բնակիչներից յիշուում է Անտոն որդի Բարսեղը, որը նաեւ յայտնի նաւաստի է եղել: Մեծ թւով հայ վաճառականներ, առեւտրականներ են եղել Վենետիկում:

Ահա այստեղ է, որ Յակոբ Մեղապարտը տպում է իր առաջին գիրքը: Պատահական չէ, որ Յակոբը Վենետիկն է ընտրում որպէս իր տպագրական գործունէութեան վայր:

1465-ական թվականներին տպագրութեան գիւտը արդէն սկսել էր ծաւալուել ու ծաղկել Իտալիայում, իսկ նոյն դարի վերջում Վենետիկը համարուում էր եւրոպական տպագրութեան ամենակարեւոր կենտրոնը: Ասուում է, որ ԺԶ դարի սկզբներում Վենետիկում գործում էին մօտաւորապէս 250 տպարաններ. այստեղ էին աշխատում նաեւ ոչ-իտալացի տպագրիչներ՝ գերմանացիներ, ֆրանսիացիներ, սերբեր, յոյներ, հրեաներ, որոնք իրենց մայրենի լեզուով գրքեր էին հրատարակում: Արդարեւ, Վենետիկը ամենայարմար վայրն էր Յակոբ Մեղապարտի տպագրական գործունէութեան: Այսպէս՝ Վենետիկը եղաւ հայ տպագրութեան եւ ծննդավայրը, եւ նաեւ նրա օրրանը, որովհետեւ Յակոբ Մեղապարտից յետոյ հայ երկրորդ եւ երրորդ տպագրիչները եւս այստեղ աշխատեցին:

Այստեղ ասեմ, որ մինչեւ 1890 թվականը՝ Յակոբ Մեղապարտի գործունէութիւնը մնում էր անձանօթ, հայ տպագրութեան սկիզբը համարուում էր 1565 թվականը, իսկ առաջին տպագիր հայ գիրքը՝ Սաղմոսարանը եւ հայ առաջին տպագրիչն էլ՝ Աբգար Դպիր Թոգաթցին, որ այդ շրջանում յատուկ առաքելութեամբ, հայ ազատագրական դատի կապակցութեամբ, Հռոմում էր գտնւում, Արեւմուտքի իշխաններից, բայց մանաւանդ Հռոմի պապից օժանդակութիւն գտնելու յոյսով, սակայն հետագայում երբ իր առաքելութիւնը այս ուղղութեամբ անյաջող վախճան է ունենում, նւիրւում է տպագրութեան, մանաւանդ որ՝ Օսմանեան կայսրութիւնն էլ վերահաս է լինում իրողութեան, որով Աբգարի համար դժար պէտք է լինէր նաեւ վերադարձը դէպի հայրենիք:

Առաջին անգամ Հայր Գարեգին Զարբհանեւեանն իր «Հայկական մատենագրութիւն» գործում յիշատակում է, որ 1565 թվականից առաջ տպւել են «Աղթարք» եւ «Կիպրիանոս» անունով գրքեր՝ առանց մանրամասնութիւններ տալու: Իրենից առաջ արդէն Հայր Ղեւոնդ Ալիշանը իր «Յուշիկք հայրենեաց» գործում «Աղթարք» գրքի կապակցութեամբ այն վարկածն էր յայտնում, որ այս գիրքը տպւել է 1565

Թևակահից առաջ: Այնուհետեւ հայ բանասէրները տենդոտ աշխատանքի են լծուում: Առանց բանասիրական հարցերում խորանալու՝ ասեմ, որ երախտարժան բանասէրներ՝ Հայր Գովրիկեանը, Հայր Տէրոյեանը, Սահակ եպսկ. Խապայեանը, հետագայում կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Տրդատ վրդ. Պալեանը տենդագին պրպտումների գնով փորձում էին յայտնաբերել Յակոբ Մեղապարտի անձն ու նրա գործունէութիւնը: Յակոբ Մեղապարտի եւ նրա գործի յայտնաբերման աշխատանքում մեծ դեր են ունեցել նաեւ Հայր Ա. Ղազիրկեանը, Թէոդիկը, Լէօն, Գարեգին Լեւոնեանը, Յակոբ Անասեանը, Ռ. Իշխանեանը, Արամ Բաբայեանը, Արտաշէս Տ. Խաչատրեանը եւ այլք:

Յակոբ Մեղապարտի եւ նրա գործին վերաբերող հարցերի լուծման դժւարութիւնը գայլիս է այն իրողութիւնից, որ նրա տպագրած գրքերը բացի «Պատարագատետր»-ից, չունեն յիշատակարան: Միակ յիշատակարանը, որ տպւած ունենք իր «Պատարագատետր»-ում, հետեւեալն է. «Գրեցաւ սուրբ տառս ի Յկբ., (962) 1513-ի աստուածապահ քաղաքս ի Վեւեթ, Վեւետիկ, Ֆրանկստան, ձեռամբ մեղապարտ Յակոբին: Ով որ կարդայք, մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ» (Այս սուրբ տառերը գրեցին 962 (1513)-ին Վէնէժ աստուածապահ քաղաքում, որ է Վենետիկ՝ Ֆրանկստան, Մեղապարտ Յակոբի ձեռքով: Ով որ կարդայ, թող մեղքերուս թողութիւն հայցէ Աստուծմէ):

Բանասէրները շարունակում են իրենց պրպտումներն ու ուսումնասիրութիւնները՝ առաւել լոյս սփռելու Յակոբի անձի եւ գործունէութեան մութ կողմերի վրայ: Այս ուղղութեամբ բաւական լուրջ ու մանրակրկիտ աշխատանք է տարել ու տանում հայրենի մտաւորական, պատմագէտ Ռ. Իշխանեանը, ըստ որի՝ առաջին տպագիր հայ գիրքը Ուրբաքազիքն է՝ տպւած 1512 թվականին, ապա Պատարագատետրը, Աղթարք, Պարգատումար եւ Տաղարան: Իսկ Տրդատ վրդ. Պալեանը իր մի շատ շահեկան ուսումնասիրութեան մէջ «Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ ալ» վերտառութեամբ, տպած «Հանդէս ամսօրեայ»-ի 1894

տարևայ դեկտեմբերի համարում, հետեւեալ կարգով տալիս է տպւած գրքերի դասաւորումը:

- 1- Պարզատումար տպ. 1512 թւականին՝ Վենետիկ
- 2- Պատարագամատոյց 1513 թւականին՝ Վենետիկ
- 3- Ուրբաթագիրք 1513 թւականին՝ Վենետիկ
- 4- Տաղարան 1513-14՝ Վենետիկ
- 5- Աղթարք 1513-1514՝ Վենետիկ
- 6- Կիպրիանոս 1513-1514՝ Վենետիկ

Տրդատ վրդ. Պալեանի այս դասակարգման մէջ «Կիպրիանոս»-ը առանձին է առնել, ինչ որ սխալ է, որովհետեւ իրականութեան մէջ այն «Ուրբաթագրքի» Բ մասն է:

Իսկ տպարանը, որտեղ տպւեցին գրքերը, պատկանում էր մի կաթոլիկ անձի, որ այս պարագայում D. I. Z. A. գաղտնագրի յետեւում կանգնած անձն է: Աւելի խորացնելով իր պրպտումները՝ Ռ. Իշխանեանն ասում է. «Յնուելով վեներտիկեան դիւանատանը, գտնող երկու փաստաթղթերի վրայ, Յակոբը դեռեւս ԺԵ դարի վերջաւորութեան, 1498 թւականին գործակցում է Իտալիայի Դեմոկրիտոս Թերրաչինայի հետ՝ հայերէն գրքերի տպագրութեան սկսելու նպատակով, սակայն՝ անարդիւնք: Թերրաչինայի մահից յետոյ Յակոբը Հռոմի պապից հայերէն գրքեր տպագրելու արտօնութիւն է ստանում, նրա համար է, որ իր «Ուրբաթագրքում» դնում է պապի նկարը, հաւանաբար Յակոբը մի ձեռով սիրաշահած լինի նաեւ Վեներտիկի այդ ժամանակայ դուքսին Լեոնարդ Լորեդային», որից յետոյ սկսում է իր տպագրական աշխատանքը: Ռ. Իշխանեանից առաջ, 1913 թւականին, Հայր Կարապետ Տ. Սահակեանը «Բազմավէպ»-ում տպած իր «Հայկական առաջին տպարանի հիմնադիր Դեմոկրիտոս Թերրաչինա» վերտառութեամբ յօդւածում ջանալով լուծել հայկական առաջին տպարանի հիմնադիրի հարցը, իր հաւաքած վաւերաթղթերից ելնելով՝ յայտնում է, որ Դեմոկրիտոս Թերրաչինա անունով անձը 1489-1513 տարիների համար արտօնագիր ունէր՝ տպելու որոշ գրքեր, Թերրաչինան այդ արտօնութիւնը վերցրել էր տպելու համար արաբերէն, մարիտաներէն, ասորերէն, հայերէն,

հնդկերէն եւ Պերպերիստանի լեզուներով գրքեր, սակայն ինքը մահացաւ 1513 թւականին մայիսից առաջ՝ առանց մի բան տպելու այս լեզուներով. Դեմոկրիտոսի եղբօր՝ Մաքսիմոսի գաւակները Լեյիոյ եւ Փաօլօ եղբայրները, որպէս ժառանգորդները, յաջողում են արտօնութեան առանձնաշնորհումը ձեռք բերել՝ շարունակելու համար իրենց հօրեղբօր գործը, որով Հայր Կարապետը Տ. Սահակեանին ասում է, որ հայ առաջին գրքերը պէտք է որ Դեմոկրիտոսի տպարանից լոյս տեսած լինեն 1513 թւականի մայիսից յետոյ, յետվերանորոգման արտօնագրի, իսկ նշանադրումը մեկնում է

D. Democrito, I, Italiano & Z. Zacomo Armeno:

*Վերջերս բանասէրները յանգեցին հետեւեալ մեկնաբանութեան.*

D. dia Servium	Աստծու ծառայ
I. Iacobus	Յակոբ
Z. Zuav	Զուաւ
A. Andrea	Անդրէաս

*Ռ. Իշխանեանի մեկնաբանութիւն*

D. Dei Servus	Աստծու ծառայ
I. Iacobus	Յակոբ
Z. Zanni	ծաննի-ին: Հայերէն Յովհաննէս
A. Armenius	Հայ

Հայ առաջին գրքի տպագրութեան եւ տպագրիչ անձի վերաբերեալ անլոյծ մնացած հարցերից մէկն էլ Յակոբ Մեղապարտի ով լինելն է: Դժբախտաբար, նրա մասին մեզ հասած տեղեկութիւնները ենթադրութեան սահմաններում են մնում, եթէ չունենայինք «Պատարագատետր»-ի յիշատակարանը՝ նրա անունն իսկ անձանօթ կը մնար մեզ: Հայր Գալեմքերեանը, ելնելով տպած գրքերի բովանդակութիւնից, Յակոբին քահանայ կամ վարդապետ է համարում,

աւելի առաջ գնալով՝ յարգելի վարդապետը Յակոբի կաթոլիկ լինելն էլ է ընդունում: Վահան Զարդարեանը ելնելով Յակոբի տպագրած գրքերի հազաւազիւտ օրինակներից մի քանիսից, Կեսարիայում գտնւած լինելու իրողութեան, առաւել Ալիշանի այն վկայութիւնից, թէ Փոքր Հայքից աւելի կեսարացիներ են գաղթել Վենետիկ, եզրակացրել է Յակոբի հաւանական կեսարացի լինելը. Գարեգին Լեւոնեանը հաւանական է համարում Յակոբի ջուղայեցի վաճառական լինելը՝ ելնելով այն իրողութիւնից, որ Մեղապարտ Յակոբի գործունէութեան ընթացքում ջուղայեցի եւ ագուլեցի վաճառականներ կային Վենետիկում: Իսկ Յակոբ Մեղապարտի նկարը 1912-13 թւականին հայ տպագրութեան 400-ամեակի առիթով է պատրաստւել. այս մասին Վահան Զարդարեանը յայտնել է, որ ցանկութիւն ունէր մի ենթադրական նկարով առաջին հայ տպագրիչի տիպարը ներկայացնել... «Այդ պատճառով,- ասում է Զարդարեանը,- տարիներով հետամուտ եղանք եւ վերջապէս փորագրիչ պրն. Նշան Կարապետեանի մօտ գտանք 400 տարւայ հնութիւն ունեցող պղնձէ փորագրութեան մի նկար, որի փառաւոր երեսոյթը եւ հայկական քիթը մեզ մօտ համոզում ստեղծեցին, որ կարող է ներկայանալ որպէս Մեղապարտ Յակոբ: Սոյն պղնձէ փորագրութիւնը յանձնելով ծանօթ նկարիչ պրն. Երւանդ Դեմիրճեանին, որ գծեց փոքրիկ փոփոխութիւններով եւ կարծում ենք, որ այսօր նիւրազործւել է (Յիշատակարան (1512-153) 2 մաս «Հայ Վենետիկ - առաջին հայ տպագրութիւնը», Կահիրէ, 1933-39, էջ 7-8):

Յակոբ Մեղապարտի տպագրած գրքերի բովանդակութիւնը առաւելաբար կրօնական է, այսպէս «Պատարագատետր»-ը, Հայ Եկեղեցու պատարագամատոյցն է կամ խորհրդատետրը՝ «Պարգատումար»-ը տոմարացոյց է, որը բովանդակում է նաեւ նշանացոյց, կաղանդացոյց, երազացոյց, ծննդեան տղայոց եւ մարմնախաղաց բաժիններ, «Ուրբաթագիրք»-ը, որի վերնագիրն է «Անուն գրոցս է սուրբ ուրբաթագիրք», առաջին մասում բովանդակում է երգմնեցուցական ձեւեր. իսկ երկրորդ մասն էլ Կիպրիանոսն է, որ ունի ենթաբաժիններ:

- ա- Պատմութիւն Յուստիանէ կուսին
- բ- Մաղթանք առ ամենայն սուրբս Աստծու
- գ- Աղօթք Ներկացւոյ
- դ- Չորս Աւետարաններից հատւածներ՝  
բժշկութեան վերաբերեալ
- ե- Աղաւթք Փոկասու
- զ- Վասն գանի

«Աղթարք» գիրքը Յակոբ Մեղապարտի հրատարակած գրքերում ամենածաւալունն է եւ բովանդակում է.

1- Աղթարք արանց եւ կանանց, կանանց կարծիքները՝ մարդկային բնաւորութեան մասին:

2- Տանուտէրացոյց-գուշակութիւններ՝ արեւի փոփոխութեան համաձայն:

3- Ամսացոյց ամենայն եղանակաց-գուշակութիւններ, 12 ամսւայ վրայ բաժանւած:

4- Գալիանոսի բժշկարանը:

Եւ վերջապէս, «Տաղարան»-ը, որի բուն վերնագիրն է տաղարան է սա հոգու եւ մարմնի, պարունակում է տաղեր, հանելուկներ: Այստեղ տեղ են գտել՝ Յովհաննէս Թլկուրանցին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգոր Վարդապետը եւ Ներսէս Շնորհալին: Շնորհալիի առակներից մէկը, որ տեղ է գտել «Տաղարան»-ում, հետեւեալն է.

Տուն մի տեսայ սպիտակ փռած

Ու սեւ հաւեր ի ներս թռած,

Չոս ւածէին՝ ցեղ իցեղած

Լեզուվ խօսին քանականաց:

(Գիրք)

Իր այս գրքերի համար Յակոբ Մեղապարտը օգտագործել է գլխագիր եւ բոլորագիր տառեր, ինչպէս նաեւ յատուկ ոճի զարդագրեր, որպէս մեծատառ՝ իր գրքում կան նաեւ զարդեր՝ վերնախորագրելու համար օգտագործել է 24 զարդչրջանակներ:

Յակոբ Մեղապարտի գրքերի տպագրութեան մասին խօսելով՝ Բաբգէն Չուգասպեանը գրել է. Հայերէն հնագոյն

գրքերի արտաքին ձեւաւորման հարցերը նոյնպէս չեն վրիպել մեր մատենագէտների ուշադրութիւնից: Նրանց հետազոտութիւններում նշւած է, որ տպագրութիւնը, ժամանակի հանգամանքները նկատի ունենալով, որակեալ է, մաքուր եւ կանոնաւոր, հիմնականում պահպանւել են բառանջատումները, սակաւ են սխալները, հնարաւորութեան սահմաններում տպագրական տառերը նմանեցւել են ժամանակի ձեռագիր բոլորագրին, գրչագիր մատենանների հետետողութեամբ էջերը զարդարւել են խորանցներով, թռչնագրերով, լուսանցազարդերով, տպագրութիւնը կատարւել է երկու գոյն՝ սեւ ու կարմիր:

*Այո՛, 500 տարիներ առաջ կատարւած հայ առաջին տպագիր գիրքը որքան էլ մեր այսօրւայ չափանիշով համապատասխան չլինի տպագրական արւեստին, սակայն իր ժամանակում մի իրագործում էր, այն արժանի է ամենավեհ գնահատանքի: Յակոբի գործը ինչ-ինչ պատճառներով ընդհատուած է աւելի քան հինգ տասնամեակ, միայն 1565 թւականին է, որ կրկին վենետիկում, Աբգար Դպիր Թոգաթցու ջանքերով վերսկսուած է հայերէն գրքերի հրատարակութիւնը. դրանից յետոյ գործը շարունակուած է:*

1- Կ. Պոլիս՝ 1567 տպագրիչ՝ Աբգար Դպիր եւ նրա որդին Սուլթանշահ եւ Յովհաննէս Տերզնցի քահանան Հռոմում. Հռոմ 1580. տպագրիչ՝ Սուլթանշահ եւ Յովհաննէս Տերզնցի քահանան:

2- Լոով՝ 1616, տպագրիչ՝ Յովհաննէս Քարմատանենց

3- Նոր Զուղա՝ 1638 տպագրապետ՝ Խաչատուր Կեսարացի վարդապետ:

4- Ամստերդամ՝ 1660 - տպագրիչներ՝ Յովհաննէս Զորեցի եւ Ոսկան Երեւանցի:

5- Մարսէյլ 1672- տպագրապետ՝ Ոսկան Երեւանցի

6- 1771 թւականին էջմիածնի Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի ջանքերով

Հայ գրքի տպագրութեան 500-ամեակի առիթով ցանկանում ենք մի քանի խօսք ասել հայ տպագրութեան նւիրական գործին իրենց մասնակցութիւնը բերած եւ Նոր Զուղայում

առաջին տպարան հաստատած եւ առաջին գիրքը տպած երախտարժան Խաչատուր Կեսարացի վարդապետի անձի եւ գործունէութեան մասին, որովհետեւ նա համարուում է տպագրութեան ռահվիրան ոչ միայն Պարսկաստանում, այլեւ՝ ընդհանրապէս ողջ Միջին Արեւելքում:

Սպահան մայրաքաղաքի մերձակայքում «ծնւած ու մեծացած» Նոր Զուղան շուտով դարձաւ մեր ժողովրդի հոգեւոր, մշակութային եւ եկեղեցական կեանքի գլխաւոր կենտրոններից մէկը: Զարգացման այս ընթացքում իր մեծ ներդրումն է ունեցել Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի երախտարժան առաջնորդ Խաչատուր եպիսկոպոս Կեսարացին, որն ընդհանրապէս յիշատակւել է որպէս Խաչատուր վրդ. Կեսարացի:

Կեսարացին 1620 թւականին օրւայ Մովսէս կաթողիկոսի կողմից Նոր Զուղա է ուղարկւում որպէս կաթողիկոսական նւիրակ եւ քիչ ժամանակ յետոյ էլ ժողովրդի բուռն ցանկութեան վրայ նշանակւում է նոյն թեմի առաջնորդ:

Իր առաջնորդութեան առաջին տասը տարիներում մեծ աշխատանք է առաջ տանում թեմի հոգեւոր կեանքի զարգացման գծով: 1630 թւականին որպէս կաթողիկոսական նւիրակ՝ Յունաստան եւ Լեհաստան է գնում: Եւրոպայում եղած ժամանակ տեղեկանարով այնտեղ տպագրւած գրքերի մասին՝ Նոր Զուղա վերադարձին ինքն էլ ձեռնարկում է տպագրական ծանր աշխատանքին:

Կեսարացին իր անմիջական օգնականներով սկսում է իր տպագրական աշխատանքները: Երկու տարւայ անխոնջ աշխատանքից յետոյ՝ 1638 թւականին տպում է իր առաջին գիրքը՝ «Սաղմոս ի Դաւիթ» վերտառութեամբ: Դժբախտաբար, Կեսարացու այս գործը մինչեւ 1968 թւականը անյայտ էր մնացել:

Կեսարացին իր տպագրական աշխատանքն սկսել էր դեռեւս 1636 թւականին եւ յետ տքնաջան աշխատանքի՝ յաջողում է տպել իր առաջին գիրքը՝ 1638 թւականին: Այնուհետեւ նոյն Խաչատուր Կեսարացու տպարանից տպւում են հետեւեալ երեք գրքերը՝ Հարանց վարք՝ 1641, Խորհրդատետր՝ 1641 եւ Ժամագիրք ատենի՝ 1642:

*Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանը մերթընդմերթ շարունակեց ու դեռեւս շարունակում է իր գործունէութիւնը՝ երբեմն աշխոյժ, երբեմն դանդաղ եւ երբեմն ընդմիջոցներով:*

*Հայ գրքի տպագրութեան 500-ամեակին նւիրւած այս համեստ աշխատանքս եզրափակում եմ անմահանուն Թէոփիկի ներբողական տողերով.*

«Առ քեզ Մեղապարտ Յակոբ, կը վերընծայեմ իմ հիացումս ու պաշտումս անփոխարինելի ծառայութեանդ համար, զոր չորս դար առաջ լռիկ-մնջիկ մատուցիր հայկեան սերունդին, ի տար աշխարհ կամովին պանդխտելով, հոն անանուն ու աննշան ապրելով եւ հայ տպագրութեան նախայրիքը տալով մեզ, իբր մասունք նւիրական մեր մտատրական տաճարի: Հայ ազգը մեղապարտութեանդ հանդէպ երախտապարտ պիտի մնայ յաւէտ եւ մականունի մը պէս անուանդ լծած այդ ածականն ալ պարտ է այլեւս բազմերախտի վերածել անպայման» (Տիպ եւ տառ, էջ 38):

ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ

# Հայ տպագրութիւնն Իրանում 1638 - 2011

*Խմբագրական խորհուրդ՝  
Բագրատ Տէրտէրեան  
Արշալոյս Աղայեան  
Լեւոն Մինասեան  
Անդրանիկ Գէորգեան  
Սեպուհ Ամիրխանեան  
Անդրանիկ Սիմոնեան  
Գառնիկ Յովասափեան  
Արմինէ Մելիք-Իսրայէլեան  
Նորայր Շահնազարեան*

*Աշխատութեան մէջ գետեղլած են 1638-ից մինչեւ 2011  
թւականը Իրանում տպագրւած ամենատարբեր բնոյթի  
հայերէն եւ թարգմանական գրքերի, բառարանների,  
տեղեկագրերի, օրացոյցների, պարբերական մամուլի եւ այլ  
տպագիր նիւթերի վերաբերեալ մատենագիտական ամփոփ  
տւեալներ՝ դասակարգւած ըստ բնագաւառների եւ լոյս  
ընծայման թւականի:*

## Արշալոյս Աղայեան

Ծնւել է 1946 թւականին՝ Իրանի Բուրլարի գաւառի Ֆարաջաբադ հայաբնակ գիւղում: Հայրը ծագումով սասունցի Թադէոս (Պապան) Աղայեանն է: Մայրը Փերիայում ծնւած, արմատներով շուշեցի Նազելի Մադաթեանն է: 1965 թւականին աւարտել է Թեհրանի հայկական «Արարատ» ազգային միջնակարգ դպրոցը: Եղել է Թեհրանի «Աբովեան» հայկական մշակութային կենտրոնի հիմնադիրներից, որի բացումը կատարւել է իր անդրանիկ անհատական ցուցահանդէսով՝ 1965 թւականին: 1965-73 թւականներին որպէս ուսուցիչ՝ աշխատել է Թեհրանի «Արարատ» եւ «Քուշեշ-Դաւթեան» ազգային դպրոցներում: 1970 թւականին աւարտել է Թեհրանի Քեամալ-օլ-Մուքի անվան գեղարվեստի ուսումնարանի գեղանկարի եւ քանդակի բաժինները:

1967 թւականից մինչեւ 1973 թւականը Աղայեանը մասնակցել է Իրանում կազմակերպւած անհատական եւ հաւաքական ցուցահանդէսների՝ դառնալով յայտնի նկարիչ: Այդ տարիներին ստեղծել է նկարչական խմբակներ, կազմակերպել ցուցահանդէսներ՝ հայ երեխաների համար, ձեւաւորել հայկական թատրոններ:

1973 թւականին Աղայեանը ընտանիքի հետ հայրենադարձւել է Խորհրդային Հայաստան: 1978 թւականին աւարտել է Երեւանի Գեղարվեստա-Թատերական ինստիտուտի գեղանկարի բաժինը: 1980-ից մինչեւ 1992-ը աշխատել է այդ ինստիտուտի գեղանկարի ամբիոնում: Ունեցել է ցուցահանդէսներ՝ Հայաստանում, ԱՄՆ-ում, Իրանում եւ այլուր: Ստեղծագործութիւններից մի քանիսը դարձել են թանգարանային գոյք:

Աղայեանը 1984 թւականին դարձել է Հայաստանի եւ Խորհրդային Միութեան նկարիչների միութեան անդամ: Շարունակում է զբաղւել հասարակական եւ բարեգործական գործունէութեամբ՝ նպաստելով Հայրենիք-Մփիւռք կապերի ամրապնդմանը: Իր բարեգործական նպաստն է բերել

Հայաստանի եւ Արցախի զոհուած ազատամարտիկների երեխաներին: Նրա գործունէութեանն են անդրադարձել Իրանի եւ Հայաստանի մամուլը, ռադիօն եւ հեռուստատեսութիւնը: 2008 թւականին լոյս է տեսել Աղայեանի կեանքին եւ ստեղծագործութեանը նւիրւած «400-ամեայ վկան» գիրք-ալբոմը՝ CD յաւելւածով: Աշխատում է մասնագիտական գրքերի թարգմանութիւնների վրայ: Աղայեանի նախաձեռնութեամբ հրատարակել են մի շարք գրքեր:

Աղայեանը 1990 թւականին ստեղծւած Հայրենադարձ իրանահայերի մշակութային հասարակական կազմակերպութեան հիմնադիրներից է, որը նպաստում է հայ-իրանական բարեկամութեան գործընթացների ծաւալմանը:

## Բագրայր Տերփերեան

Ծնեւել է 1936 թւականին՝ Իրանի Փերիա գաւառի Հազարջրիբ գիւղում: 1946-ին ծնողների հետ ներգաղթել է Հայաստան: 1959 թւականին աւարտել է Երեւանի Պետական համալսարանի Աշխարհագրութեան ֆակուլտետը: 1959-63 թւականներին աշխատել է Հայաստանի Նախարարների խորհրդի Երկրաբանական վարչութիւնում:

1963 թւականից աշխատում է ակադեմիկոս Ի. Վ. Եղիազարովի անվան Զրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի ինստիտուտում: Աշխարհագրական գիտութիւնների թեկնածու է 1975 թւականից:

Տէրտէրեանը բացայայտել եւ ձեւակերպել է գիւղատնտեսական դաշտերի բուսածածկոյթի եւ ֆիտոկլիմայական պայմանների միջեւ եղած կապերը եւ դրանց հիման վրայ մշակել մշակութաբոյսերի ջրասպառումը ճշգրտելու մեթոդներ, որոշել է տրանսպիրացիան, ֆիզիկական գոլորշացումը հողից առանձին-առանձին՝ գիտական շրջանառութեան մէջ դնելով բոյսերի «մաքուր ջրասպառում» արտայայտութիւնը: Այս բոլորը նախադրեալ է գիւղատնտեսական մշակութաբոյսերի ջրասպառումը կրճատելու եւ ոռոգման ջուրը խնայելու միջոցառումներ մշակելու համար:

Տէրտէրեանն ունի 80-ից աւել գիտական աշխատանքներ, որոնց մի մասը հրատարակւած է Հայաստանի եւ Ռուսաստանի պարբերականներում, միւս մասն էլ գիտական հաշւետութիւնների ձեւով պետական գրանցման է ենթարկւած: Ունի աշխարհագրութեան պատմութեանն ու հասարակական խնդիրների վերաբերեալ գիտա-մասսայական բազմաթիւ յօդւածներ՝ հանրապետական մամուլում եւ Հայկական հանրագիտարանում:

Տէրտէրեանը Հայրենադարձ իրանահայերի մշակութային հասարակական կազմակերպութեան հիմնադիրներից է եւ ներկայիս փոխնախագահը:

## ՆԱԽԱԲԱՆ

1604 թվականը՝ Շահ Աբբասեան բռնագաղթի սկիզբն ու նրան յաջորդած տարիները հայ ժողովրդի կեանքում նշանակալից են իբրև նրա ստևարածալակ հատկապես տեղահանման եւ Իրանում բնակեցման պատմական իրադարձութիւն, որի հետեւանքով՝ ձեւաւորուեց այսօր արդէն իր 400-ամեայ պատմութեամբ ու մշակոյթով յայտնի իրանահայ հատկապէս: Վերջինիս մշակութային եւ հոգեւոր կեանքի առաջընթացի մէջ անուրանալիօրէն մեծ է Նոր Ձուղայի դերը: Բռնագաղթից տարիներ անց Ձայենդէ Ռուդ գետի ձախափին հայութեան ձեռքով կառուցուած այս քաղաքում, ուր ամբարտում էր երկրի տնտեսագիտական միտքը, ծաղկում էին արհեստներն ու արւեստները, պատահական չէ, որ 1636 թվականին Խաչատուր վարդապետ Կեսարացու կողմից հիմնադրուում է Մերձաւոր Արեւելքի առաջին տպարանը եւ հրատարակուում է «Սաղմոս Դաւթի» առաջին գիրքը: 17-րդ դարից Իրանում որպէս ինքնուրոյն ժողովրդավարական միաւոր հանդէս եկող հայ քրիստոնեայ ժողովուրդն իր վերաբնակեցումից կարճ ժամանակ անց այստեղ հաստատեց եկեղեցաշինութեան հիմքերը, որն էլ նպաստեց տեղի հայ մշակոյթի, հոգեւոր եւ տնտեսական կեանքի զարգացմանը: Եկեղեցիների առկայութիւնը խթան է հանդիսանում կրթական օջախների ստեղծման համար: Զեռագիր գրքերի ստեղծումով եւ նկարագարողումով է սկսուում հայկական ծագման մշակութային արժէքների արարումն Իրանում, որոնց մասին լաւագոյնս կարելի է գաղափար կազմել՝ ծանօթանալով Նոր Ձուղայում եւ երկրի այլ վայրերում ստեղծուած գրչագիր արւեստին՝ ձեռագրերին, որոնք վարպետ գրիչների եւ ծաղկողների կողմից ստեղծուելով՝ ներկայանում են իբրև հայ մատենագրութեան եւ մանրանկարչութեան բարձրարւեստ գործեր, համարուում հայ գրչարւեստի արժէքաւոր նմուշներ:

Երկդարեան ընդմիջումից յետոյ, Նոր Զուղայում վերըսկրսուում է գրքի տպագրութիւնը: Լոյս են տեսնում տեղեկագրեր, որոնք հրատարակում էին իրանահայութեան մէջ գտնուող ազգային մարմինների մասին հաշւետուութիւններ, ինչպէս նաեւ սահմանադրական, կանոնադրական, օրացոյցային գրականութիւն:

Հրատարակում է Նոր Զուղայի պատմութիւնը, տպագրւում են հայ ժողովրդի պատմութեանը նւիրած գրքեր, կրօնա-բարոյական եւ յատկապէս դաւանաբանական հրատարակումներ՝ հայութեանը իր առաքելական եկեղեցուն կապած պահելու նպատակով: Իրանահայութիւնը՝ յանձինս Նոր Զուղայի հայրենասէր վաճառականների եւ նրանց նիւթական օժանդակութիւնը վայելող գործիչների՝ նշանակալից դեր է խաղացել 17-ից 18-րդ դարի հայոց կեանքում, նրա քաղաքական դիրքորոշման, երազանքների, ինքնուրոյն պետականութեան վերահաստատման գաղափարի ձեւաւորման մէջ: Իրանահայ մտաւորականը մեծագոյն ջանասիրութեամբ, կանգ չառնելով նիւթական գոհողութիւնների եւ այլ դժւարութիւնների առջեւ, հրատարակել է գրքեր, որոնցում տեղ են գտել Նոր Զուղայում, Թաւրիզում, աւելի ուշ՝ մեծ չափերով նաեւ Թեհրանում ծաւալւած հայկական մշակութային, կրթական, տնտեսական բնագաւառների մասին տեղեկատւական, կանոնադրական, կրօնական, խրատական, իմաստաբանական նիւթեր: Աստիճանաբար սկսել են տպագրել գեղարւեստական, իրաւաբանական, քաղաքական գանազան հարցեր արծարծող աշխատութիւններ:

Իրանահայը ստեղծել է ինքնուրոյն, արեւելեան պոէզիային արժանի քնարական ստեղծագործութիւններ, տեղի հայութեան կեանքն արծարծող արձակ գրականութիւն, որը հոգեպէս հարազատ լինելով Մայր Հայրենիքում ստեղծածին՝ առանձնանում է իր երանգով ու ինքնատիպութեամբ: Հասկանալի է եւ բնական, որ իրանահայ գրականութիւնը աղերսւում է նաեւ պարսկական գրականութեան հետ, որը աշխարհին տւել է Խայեամ, Հաֆէզ, Ֆիրդուսի...

Իրանում հայ գրքի տպագրութեան պատիւը Նոր Զուղա-

յից յետոյ Թաւրիզինն է: 19-րդ դարում իրանական Ատրպատականի հայուլթեան զգալի հատւածը աստիճանաբար բնակութիւն է հաստատում Թաւրիզում եւ աշխոյժ մշակութային կեանքի նախադրեալ ստեղծում:

Ընդառաջելով օրւայ առաջնորդ Ստեփանոս եպս. Մխիթարեանի դիմումին՝ կովկասահայ բարերար Յովհաննէս Յովհաննիսեանը 1888 թւականին «Արամեան» դպրոցին է նւիրում տպագրական մամուլ, կառուցում շէնք, որով եւ Թաւրիզում սկզբնաւորում է գրքի տպագրութիւնը:

«Արամեան» դպրոցի տպարանում, որը հետագայում անցնում է տեղի թեմական առաջնորդարանին, տպագրում էին գրքեր, տեղեկատուներ, օրացոյցներ: Հրատարակող գրականութեան ցանկը հետզհետէ հարստանալով՝ ընդգրկում է գեղարւեստական գրականութեան, պատմական, հրապարակախօսական, իմաստաբանական աշխատանքներ, որոնց մէջ կան ե՛ւ ինքնուրոյն, ե՛ւ թարգմանական երկեր: Գրական մշակութային կեանքին նոր լիցքեր հաղորդեցին 1915 թւականին Հայոց Յեղասպանութիւնից մազապուրծ եղած արեւմտահայ եւ 1920-ականների խորհրդայնացած Հայաստանից իրանում ապաստան գտած մտաւորականները:

20-րդ դարի սկզբից իրանի մայրաքաղաք Թեհրանում ձեւաւորուեց ստւարաթիւ հայ համայնք, որը այսօր էլ հոգ է տանում իր կրօնական եւ մշակութային կեանքի խնդիրների մասին, շարունակում իր ստեղծարար ուղին: Այստեղ դարասկզբից գործող ամենահին տպարաններից մէկը «Փարոսն» է: Այնուհետեւ հիմնադրում է «Մողեուն»-ը, իր սեփական տպարանն է հիմնադրում «Ալիք» օրաթերթը: Այս մշտապէս գործող եւ ստւարաքանակ տպագիր աշխատանքներ հրատարակող տպարաններին զուգահեռ՝ տարբեր ժամանակահատուածներում գործում էին նաեւ ուրիշները: Յատկանշական է այն, որ թէ՛ հայերէն, եւ թէ՛ օտարալեզու գրքեր են տպագրում նաեւ պարսկական տպարաններում:

Թեհրանում հայոց տպագիր գիրքը բազմազան է: Ժամանակի ոգուն համընթաց՝ տպագրում են հասարակական պահանջարկ ունեցող գործեր: Մեծ ուշադրութիւն է դարձ-

լուծմ դասագրքերի հրատարակութեանը: Այդ գրքերի հեղինակներն են հայ դասական երեւելի գրողները, հայ մանկավարժները, խմբագիրներն ու հրատարակիչները: Ստւարածալ է գեղարւեստական գրականութեան ցանկը: Հրատարակւում են հայ դասականները, գրողները, թարգմանաբար ներկայացւում են նմուշներ՝ համաշխարհային գրականութեան մարգարիտներից, ինչպէս օրինակ՝ Շեքսպիրի ամբողջ ստեղծագործութիւնը՝ մեծանուն գրականագէտ, քաղաքական գործիչ եւ անմահ թարգմանիչ Յովհաննէս-խան Մասեհեանի թարգմանութեամբ: Մեծ ուշադրութիւն է դարձւում մանկա-պատանեկան գրականութեան հրատարակմանը: Այս իմաստով «Ալիք» օրաթերթը չի զիջում «Մոդեռն»-ին եւ Նոր Զուղայի տպարաններին՝ յատուկ մատենաշարերով լոյս ընծայելով նաեւ գաղափարական ուղղւածութիւն ունեցող գրականութիւն:

Իրանում տպագրւած հայ գրքի դերն ու նշանակութիւնը անուրանալիօրէն մեծ է մեր մշակոյթի մէջ: Տաք է իրանահայի հայրենասիրական շունչը: Ապրելով հայրենիքի անմիջական հարեւանութեամբ՝ իրանահայը առաւել մօտկից է զգացել նրա հեւքը. հոգսերն ու ծառայած խնդիրները առաւել տեսանելի են եղել նրան՝ հնարաւորութիւն տալով անաչառ կերպով վերլուծել եւ ընկալել իրականութիւնը: Իրանահայութիւնը գերծ է եղել հայրենիքում տիրող մտքի բանտւածութեան քաղաքականութիւնից, ուստի՝ նրան յաջողւել է որոշակի գրականութեան միջոցով մոռացումից փրկել հայ ժողովրդի նորագոյն պատմութեան յիշողութիւնը, ինչն էլ իր նպաստը բերեց անկախութեան ճանապարհին՝ ճշգրիտ պատկերացում տալով Հայաստանի առաջին Հանրապետութեան մասին՝ վերականգնելով նրա պետականութեան խորհրդանիշերը:

Սփիւռքում ստեղծւած ժառանգութեան մէջ, իրանահայ գրքի տպագրութեան եւ գրական մտքի ստեղծման վաստակաշատ երախտաւորների շնորհիւ, իրանահայ մշակոյթը, որպէս այդպիսին, առաւել հոգեհարազատ է հային: Այդ մշակոյթի ոսկէ օղակն է գիրքը, ինչին յատուկ նշանակութիւն է տւել իրանահայը: Թերեւս այս գիտակցութեամբ է

առաջնորդել իրանահայը՝ իր չորսդարեայ կենսագրութեան ընթացքում ստեղծելով բազում արժէքաւոր գործեր:

Անդրադառնալով տեղի ամենանշանաւոր տպարաններին, չենք կարող չնշել Թեհրանի «Մոդեռն» տպարանը, որը երկրորդն է Նոր Զուղայի տպարաններից յետոյ: Հիմնադրուելով Ֆերդինանդ Սիմոնեանի կողմից 1922 թվականին, այն երկար ժամանակ գործունէութիւն է ծաւալել իր հիմնադրի եւ նրա ազգասէր ընկերների շնորհիւ: Հիմնադրի մահից յետոյ տպարանը գնւել է ազգային նշանաւոր գործիչ, մտաւորական Տաճատ Պօղոսեանի կողմից եւ յոյժ արգասաբեր աշխատանք կատարել:

Հայ լրագրութեան պատմութեան մէջ բացառիկ տեղ ունի մինչ օրս իր հայանպաստ գործունէութիւնը շարունակող «Ալիք» օրաթերթը, որի տպարանում լոյս են տեսել բազմաթիւ արժէքաւոր գրքեր, որոնց ազգային, գաղափարական ուղղածութիւնը արգելւած էր Խորհրդային Հայաստանի հայութեան համար: Տասնամեակներ անց՝ այն իր արժանի ծառայութիւնը մատուցեց Հայաստանի անկախութեան հռչակման գործին: «Ալիք» օրաթերթի շուրջ միշտ համախըմբւած է եղել եւ է՝ իրանահայ մտաւորականութեան սերուցքը: Օրաթերթն ունեցել է արժանաւոր հովանաւորներ ու խմբագիրներ, որոնք իրենց նշանակալից աւանդն են ներդրել Իրանում հայ գրքի հրատարակման եւ տեղի հայութեանը՝ Հայաստանի անկախութեան բաղձանքին հաղորդակից դարձնելու գործում:

Արժանին պէտք է մատուցել նաեւ այն մարդկանց, ովքեր իրենց նւիրել են իրանահայ գրքի պահպանման, ցուցակագրման եւ առհասարակ նրա մատենագիտութեան կազմման գործին: Բացառիկ է Սմբատ Տէր-Աւետիքեանի ծառայութիւնն այս բնագաւառում: Նա առաջինն է կազմել Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի ձեռագրերի ցուցակը: Փաստ է, որ իրանահայութեան մէջ, ի դէմս Նոր Զուղայի վաճառականների հաշւապահական փաստաթղթերի, տեղեկագրերի, առաջիններից մէկն է սկզբնաւորւել թղթադրոշմ աշխարհաբար խօսքը:

Իրանահայ անհատները իրենց ազգանպաստ գործունէ-  
ուլթիւնը ծաւալեցին նաեւ այլ երկրներում: Պատահական չէ,  
որ առաջին հայ մամուլը՝ «Ազդարարը», ստեղծւեց իրանահայ  
մտաւորականի ու հոգեւորականի՝ Յարութիւն Շմաւոնեանի  
կողմից հնդկահայ գաղուլթում: Այնտեղ Շահամիրեանների  
կողմից գրւեց հայ իրականութեան մէջ գոյուլթիւն ունեցող  
առաջին սահմանադրուլթիւնը՝ «Որոգայթ փառաց»-ը:

Իրանահայ մատենագիտութեան կազմման մէջ ծաւալած  
իր գործունէութեամբ անուրանալի ականդ ունի Լեւոն  
Մինասեանը, ում մատենագիտական աշխատանքներն  
ամբողջացնում են Իրանում եղած հայ ձեռագրերի ցուցակը,  
հրապարակւած գրքերի, պարբերականների ցանկերը:  
